

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
Ի ՊԱՏԻ ԱՐՄԷՆ ԵՒ ՄԻՄԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՆԵՐՈՒ
ԵՒ ԳԻՆԵՉՕՆ ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ «ՆԱՄԱԿՆԵՐ ՊԷՅՐՈՒԹԷՆ Ա.» ՀԱՏՈՐԻՆ

Հինգշաբթի, Յունիս 23ի երեկոյեան ժամը 7:30ին Կլէնտէյլի Հանրային Գրադարանին մէջ տեղի ունեցաւ Մեծարանքի Հանդիսութիւն՝ ի պատիւ Արմէն եւ Միմի Յարութիւններու, որ կազմակերպուած էր Հայ Այնթապցիներու Մշակութային Միութեան եւ Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելըսի Մասնաճիւղի, որուն կը մասնակցէին նաեւ Ամերիկայի Հայ Գրողներու Միութիւնն ու Հալէպի Կրթասիրաց Վարժարանի Շրջանաւարտից Միութիւնը:

Օրուան հանդիսավարն էր Թագուհի Արվումանեան, որ կատարեց բացման խօսքը: Արմէն Յարութիւնեանի «Նամակներ Պէյրութէն Ա.» հատոր գիրքը ներկայացուց Վաչէ Սեմերճեան, իսկ Յարութիւնեան Ամոլ Սեկենասը ներկայացուց Երուանդ Պապայեան, իսկ Հատորէն ընթերցումներ կատարեց Գէորգ Քէօշկէրեան: Տեղի ունեցաւ Գինեձօն «Նամակներ Պէյրութէն Ա.» հատորին, ինչպէս նաեւ գեղարուեստական յայտագիր:

Առաջնորդ Սրբապան Հօր կողմէ ներկայ գտնուեցաւ Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգ. Տ. Տաճատ Ծ. Կրդ. Եարպըմեան, որ շնորհաւորեց Տէր եւ Տիկին Արմէն եւ Միմի Յարութիւնեանները եւ իր գնահատութիւնը յայտնեց սոյն հանդիսութիւնը կազմակերպողներուն: